«Շտիգեն» ՍՊԸ
Հայաստան, Երևան,
Դ. Անհաղթ 23, 6-րդ տարածք
Հեռ. +374 11 23 00 23
Կայք. www.shtigen.com

Shtigen LLC
23, 6th area D. Anhaght
Yerevan, Armenia
Tel: +374 11 23 00 23
Web: www.shtigen.com

«Շտիգեն» ՍՊԸ վերաբերյալ սնանկության դատարանում հարուցված գործի մասին

Հարգելի՛ գործընկերներ,

Ցանկանում եմ անձամբ և նախապես տեղեկացնել Ձեզ, որ 2026 թվականի նոյեմբերի 3-ին ՀՀ սնանկության դատարանը վարույթ է ընդունել «Շտիգեն» ՍՊԸ-ի երեք ներկա և նախկին աշխատողների դիմումը՝ ընկերությանը սնանկ ճանաչելու մասին (գործ ՍնԴ/6744/04/26): Պահանջները վերաբերում են աշխատանքային վճարումներին: Դիմումը վարույթ ընդունելը դատավարության սկզբնական փուլն է. դատարանը դեռ չի քննել այն ըստ էության և ընկերությանը սնանկ չի ճանաչել: Ընկերության գույքի և հաշիվների նկատմամբ որևէ սահմանափակում չի կիրառվել:

Ընկերությունը վճարունակ է: Մենք համաձայն չենք պահանջներին և գտնում ենք, որ սնանկության ընթացակարգը նախատեսված չէ վիճելի աշխատանքային պահանջների լուծման համար: Մեր դիրքորոշումը կներկայացնենք դատարանում:

Ընկերությունը շարունակում է իր բնականոն գործունեությունը, և գործընկերների ու պատվիրատուների հանդեպ բոլոր պարտավորությունները կատարվում են:

Գործի ընթացքի մասին լրացուցիչ կտեղեկացնեմ: Հարցերի դեպքում խնդրում եմ կապվել անմիջապես ինձ հետ:

Հարգանքով՝
«Շտիգեն» ՍՊԸ տնօրեն
Հայկ Շեկյան

Ստորագրող
ՀԱՅԿ ՇԵԿՅԱՆ
3602760189

2026-11-06 14:46:10 GMT+04:00